



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական պտն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(անհատ ձեռնարկատեր Մելքոն Էմիրզեոլլուի 13.01.2017թ. վարչական բողոքը մերժելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«17» փետրվարի 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության 10.10.2016թ. թիվ 2136028 ստուգման ակտի 2-րդ կետն անփոփոխ թողնելու մասով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 25.11.2016թ. թիվ 36/2 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ անհատ ձեռնարկատեր Մելքոն Էմիրզեոլլուի լիազորված անձ Անուշ Կիրակոսյանի 13.01.2017թ.-ի բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

Անհատ ձեռնարկատեր Մելքոն Ալեքսան Էմիրզեոլլուն՝ ի դեմս լիազորված անձ Անուշ Կիրակոսյանի (այսուհետ՝ նաև Բողոք բերած անձ) բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Գանգատարկման հանձնաժողով) 25.11.2016թ. թիվ 36/2 որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության (այսուհետ՝ նաև Տեսչություն) 10.10.2016թ. թիվ 2136028 ստուգման ակտի 2-րդ կետն անփոփոխ թողնելու մասով անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 13.01.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ Տեսչության պետ Ա. Հարությունյանի կողմից 05.09.2016թ. տրված թիվ 2136028 հանձնարարագրի հիման վրա ավագ հարկային տեսուչներ Ա. Դավթյանի, Խ. Խադիջյանի, հարկային տեսուչներ Ռ. Հակոբյանի և Ա. Լազարյանի կողմից ստուգում է կատարվել Երևան քաղաքի Երվանդ Քոչարի 17/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Մելքոն Ալեքսան Էմիրզեոլյուի (այսուհետ՝ նաև Ա/Ձ) մոտ, որի արդյունքում 10.10.2016թ. կազմվել է ստուգման թիվ 2136028 ակտը (այսուհետ՝ նաև Ակտ):

Ակտով արձանագրվել են երկու խախտումներ, մասնավորապես՝

ա. Ակտի 1-ին կետի համաձայն, Ա/Ձ-ն պահել է մեկ չձևակերպված վարձու աշխատող, որի արդյունքում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի հիմքով առաջադրվել է 60.000 ՀՀ դրամի չափով եկամտային հարկի պարտավորություն.

բ. Ակտի 2-րդ կետի համաձայն, Ա/Ձ-ին պատկանող ք. Երևան, Եր. Քոչարի փողոց 17/2 հասցեում գտնվող խանութից կանխիկ դրամով կատարված գնման արդյունքում չի կատարվել գումարի մուտքագրում հսկիչ-դրամարկղային մեքենա (այսուհետ՝ նաև ՀԴՄ) և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն, որի արդյունքում ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ և 23-րդ կետերի խախտման հիմքով Ա/Ձ-ի նկատմամբ կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանք՝ 150.000 ՀՀ դրամի չափով:

Ակտը բողոքարկվել է Գանգատարկման հանձնաժողովին, որի 25.11.2016թ. կայացված թիվ 36/2 որոշմամբ բողոքը բավարարվել է մասնակի, այն է՝ անվավեր է ճանաչվել Ակտի միայն 1-ին կետը, իսկ 2-րդ կետը՝ ՀԴՄ կիրառման կանոնների խախտման հետևանքով տուգանքի կիրառման վերաբերյալ, թողնվել է անփոփոխ:

Բողոք բերած անձը գտնում է, որ ինչպես Ակտի 2-րդ կետը, այնպես էլ Գանգատարկման հանձնաժողովի որոշումը՝ վերոհիշյալ կետն անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոքի մերժման մասով, կայացվել են օրենքի խախտմամբ՝ պայմանավորված հետևյալ փաստական հանգամանքներով.

Երևան քաղաքի Եր. Քոչարի 17/2 հասցեում Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզեոլուից առաջ առևտրային գործունեություն է ծավալել «Օսթեքս» ՍՊ ընկերությունը, որի գործունեությունը նշված հասցեում դադարեցնելուց հետո իր առևտրային գործունեությունը ծավալելու նպատակով նույն հասցեում գործունեություն է ծավալել Ա/Ձ Մելքոն Էմիրզեոլուն:

«Օսթեքս» ՍՊ ընկերության գործունեության դադարեցումից հետո հասցեում գտնվող հսկիչ-դրամարկղային մեքենան գտնվել է արգելափակված վիճակում երկար ժամանակ չօգտագործելու պատճառով: Նշված հանգամանքը, ըստ Բողոք բերած անձի, հիմնավորվում է «Տոչ-Մաստեր» ՍՊ ընկերության տնօրենի 12.10.2016թ. գրությամբ, համաձայն որի՝ Ա/Ձ Մելքոն Ալեքսանի անվամբ թիվ SU-Ա1241 ՀԴՄ-ի սպասարկման աշխատանքները վերսկսվել են 09.09.2016թ., այսինքն, ՀԴՄ-ն ստուգման իրականացման պահին՝ 08.09.2016թ.-ին, չի գործարկվել: Ավելին, «Օսթեքս» ՍՊ ընկերության գործունեության դադարեցումից հետո խանութը բնականոն գործունեություն իրականացնելու համար պատրաստ չի եղել ոչ միայն ՀԴՄ-ի արգելափակման, այլ նաև այն պատճառով, որ խանութում ապրանքները գտնվել են դասավորելու գործընթացում:

Բողոք բերած անձը նշել է, որ ավագ հարկային տեսուչ Անդրանիկ Դավթյանը (այսուհետ՝ նաև Տեսուչ) մուտք է գործել խանութ, խնդրել է իրեն ապրանք վաճառել, որին ի պատասխան խանութում աշխատանքներ իրականացնող Նելլի Դանիելյանը հրաժարվել է վաճառքից՝ պատճառաբանելով որ խանութը դեռևս չի աշխատում, իսկ ապրանքները նույնիսկ դասավորված չեն: Տեսուչը խնդրել է ցույց տալ տղամարդու սպորտային վերնաշապիկը, այնուհետև վերցրել և ուսումնասիրել է այն, 3000 ՀՀ դրամ դրել է վաճառասեղանին ու արձանագրել, որ ապրանքի վաճառք է տեղի ունեցել, իսկ իր կողմից վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և կտրոն չի տրամադրվել: Այնուհետև, վերջինս վերադարձրել է վերնաշապիկը և հետ վերցրել 3000 ՀՀ դրամ գումարը, որը շարունակել է գտնվել սեղանի վրա:

Ըստ Բողոք բերած անձի պնդման, նման իրավիճակում, երբ Տեսուչը գումարը դրել է սեղանին և ինքն էլ հետ է վերցրել նույն տեղից, ապրանքի վաճառք ըստ էության տեղի չի ունեցել, և ավագ հարկային տեսուչ Անդրանիկ Դավթյանն իր ապօրինի գործողություններով փորձել է ստեղծել ՀԴՄ-ների կիրառման կարգի վերաբերյալ օրենքի պահանջի խախտման տպավորություն, ինչն էլ արձանագրվել է:

Որպես հիմնավորում, Բողոք բերած անձի կողմից բողոքին կից ներկայացվել է Նեյի Սանասարի Դանիելյանի անվամբ «10.01.2017թ.» թվագրմամբ «բացատրություն» վերտառությամբ փաստաթուղթ, որով Նեյի Դանիելյանը հայտարարություն է անում հետևյալ բովանդակությամբ. «09.09.2016թ. ընդունվել եմ աշխատանքի որպես վաճառողուհի՝ Եր. Քոչար փող. 17/2 հասցեում: Խանութում ապրանքների դասավորման երկրորդ օրը երեկոյան ժամը 19:30-ի սահմաններում խանութ մտավ մի երիտասարդ տղամարդ, շրջեց խանութում, վերցրեց սպորտային ներքնազգեստ, հարցրեց գինը և վաճառասեղանին դրեց 3.000 ՀՀ դրամ: Ես նրան ասացի, որ մենք դեռ վաճառք չենք իրականացնում և ինքներդ էլ տեսնում եք, որ ապրանք եմ դասավորում, իսկ ՀԴՄ-ն էլ դեռ բացված չէ: Նա 5-ից 7 րոպե համառորեն պնդեց, որ գումարը վերցնեմ, քանի որ իրեն սպասողներ կան դրսում: Ես նրանից այդպես էլ գումար չվերցրեցի, այնուհետև հանեց թղթեր և ինձ վրա բարկանալով թելադրեց երկտողը, ես վախեցա, արագ գրեցի, քանի որ նա ասաց, որ եթե չգրեմ իմ և իմ տնօրենի համար ավելի վատ կլինի: Ես երկտողը գրեցի, որը մինչև հիմա էլ չեմ հիշում, թե ինչ եմ գրել: Իմ գրելուց հետո Անդրանիկը խնդրեց, որ զանգահարեմ, կանչեմ տնօրենին, այնուհետև սեղանից վերցրեց 3.000 դրամը՝ տեղը դնելով սպորտային ներքնազգեստը»:

Վերոգրյալի հիման վրա Բողոք բերած անձը որպես բողոքի իրավական հիմքեր նշելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 64-րդ, 75-րդ հոդվածները, 76-րդ և 77-րդ հոդվածների 1-ին մասերը, խնդրել է անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 25.11.2016թ. թիվ 36/2 որոշումը՝ Ակտի 2-րդ կետն անփոփոխ թողնելու մասով և Ակտի 2-րդ կետը:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի փետրվարի 17-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Բողոք բերած անձի ներկայացուցիչ Անուշ Կիրակոսյանը:

Վերջինս լսումների ընթացքում հայտնեց, որ պնդում է բողոքով ներկայացված պահանջը, միաժամանակ հայտնեց, որ վիճարկվող ստուգումից հետո անհատ

ձեռնարկատեր Մելքոն Էմիրզետյուրի կողմից դադարեցվել է ք. Երևան, Եր. Քոչարի փողոց 17/2 հասցեում խանութի աշխատանքը:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության պետի 05.09.2016թ. թիվ 2136028 հանձնարարագրի հիման վրա Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզետյուրի մոտ իրականացվել է ստուգում: Ստուգումն իրականացվել է 08.09.2016թ.-ից մինչև 20.09.2016թ.-ն ընկած ժամանակահատվածում: Որպես ստուգման հարցեր նախատեսվել են՝ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և հսկիչ-դրամարկային մեքենաների կիրառման ճշտության ստուգումներ:

- հարկային տեսուչների կողմից 08.09.2016թ.-ին կազմված թիվ 1 արձանագրության համաձայն, ավագ հարկային տեսուչ Անդրանիկ Դավթյանի կողմից 08.09.2016թ.-ին ժամը 19:10-ից 19:25-ն ընկած ժամանակահատվածում ք. Երևան, Եր. Քոչար 17/2 հասցեում գտնվող խանութից կատարվեց 1 հատ տղամարդու կիսասպորտային վերնաշապիկի գնում՝ 3000 դրամ ընդհանուր արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառող-գանձապահ Նելլի Դանիելյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց՝ ՀԴՄ-ի խափանված լինելու պատճառով: Ստուգում անցկացնող հարկային ծառայողի կողմից ներկայացվեց ծառայողական վկայականը և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Նշված արձանագրությունը ստորագրվել է տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցչի՝ Նելլի Դանիելյանի կողմից: Արձանագրության վերաբերյալ առարկություններ ներկայացված չեն:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Հանձնաժողովին տրամադրված նյութերում առկա է «Հայտարարություն 1» վերտառությամբ փաստաթուղթ, համաձայն որի՝ Նելլի

Դանիելյանը հայտարարություն է արել այն մասին, որ Ա/Ձ Մելքոն Էմիրզեոլլուի մոտ աշխատել է 06.09.2016թ.-ից և որպես աշխատանք կատարել է ապրանքների դասավորություն և վաճառք:

- ստուգման արդյունքում 26.09.2016թ. կազմվել է թիվ 2136028 ստուգման ակտի նախագիծը, որը ստորագրված է Ա/Ձ-ի լիազորված անձ Ա. Կիրակոսյանի կողմից՝ «ստացա նախագծի մեկ օրինակը» և «28.09.2016թ.» նշումներով:

- Տեսչության պետը 28.09.2016թ. թիվ 5175/3 գրությամբ Ա/Ձ-ին է ուղարկել Ակտի նախագծի օրինակը:

- ստուգման արդյունքում 10.10.2016թ. կազմվել է թիվ 2136028 ստուգման ակտը: Ակտի 2-րդ կետով արձանագրվել է, որ. «Ավագ հարկային տեսուչ Անդրանիկ Դավթյանի կողմից 08.09.2016թ.-ին ժամը 19:10-ից 19:25-ն ընկած ժամանակահատվածում ք. Երևան, Եր. Քոչար 17/2 հասցեում գտնվող խանութից կատարվեց 1 հատ տղամարդու կիսասպորտային վերնաշապիկի գնում՝ 3000 դրամ ընդհանուր արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառող-գանձապահ Նելլի Դանիելյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց՝ ՀԴՄ-ի խափանված լինելու պարճառով: Ստուգում անցկացնող հարկային ծառայողի կողմից ներկայացվեց ծառայողական վկայականը և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշման հավելված N 2-ով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ և 23-րդ կետերի պահանջները, իսկ համաձայն նույն կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի՝ գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքի կամ քանակի չմուտքագրումը հսկիչ-դրամարկղային մեքենա դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով առաջադրվում է փուզանք 150.000 դրամի չափով»:

- Տեսչության պետը 19.10.2016թ. թիվ 5439/3 գրությամբ Ա/Ձ-ին է տրամադրել Ակտի պատճենը՝ հիմք ընդունելով Ա/Ձ-ի հայտարարությունը Ակտը փոստային ծառայության միջոցով ստացած չլինելու վերաբերյալ:

- «Տոչ-Մաստեր» ՍՊ ընկերության տնօրենը 12.10.2016թ. գրությամբ Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզեոլուն հայտնել է, որ. «*«Տոչ-Մաստեր» ՍՊ ընկերությունը՝ համաձայն կողմերի միջև կնքված թիվ SU-Ա1241 հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկման պայմանագրի, 01.08.2016թ. դուրս է գրել հուլիս ամսվա ծառայությունների մատուցման հաշիվ ապրանքագիրը՝ Ա1321955660 (ընդհանուր արժեքով 1.858 դրամ): Սակայն, Ձեր կազմակերպությունը խախտելով վերը նշված պայմանագրի 3.5 կետը չի կատարել համապատասխան վճարումը: «Տոչ-Մաստեր» ՍՊ ընկերությունը համաձայն պայմանագրի 5.1.2 կետի՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ից դադարեցրել է ծառայությունների մատուցումը, իսկ 2016 թվականի սեպտեմբերի 9-ին վերսկսել է այն՝ հիմք ընդունելով Ձեր կողմից 09.09.2016թ. կատարված վճարումը»:*

- Ակտի դեմ Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզեոլուի կողմից 28.10.2016թ. Գանգատարկման հանձնաժողովին ներկայացվել է բողոք, որով Բողոք բերած անձը խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության 10.10.2016թ. թիվ 2136028 ստուգման ակտը:

- Ակտի դեմ բերված բողոքի քննության արդյունքում 25.11.2016թ. Գանգատարկման հանձնաժողովի կողմից կայացվել է թիվ 36/2 որոշումը, որով անվավեր է ճանաչվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության 10.10.2016թ. թիվ 2136028 ստուգման ակտի 1-ին կետը, իսկ 2-րդ կետը թողնվել է անփոփոխ՝ հիմք ընդունելով գործարքի կատարման փաստը և այն հերքող ապացույցների բացակայությունը, ինչպես նաև նաև ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշման հավելված 2-ի 30-րդ կետը, որի համաձայն. «*ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու՝ ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձը տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը տեղեկացնում է ՀԴՄ-ի անսարքության մասին: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է»:*

- Հանձնաժողովին ուղղված բողոքին կից ներկայացվել է Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզեոլուի կողմից Անուշ Կիրակոսյանին տրված լիազորագիրը, որով վերջինս

լիազորվել է հանդես գալ Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզետոլլուի անունից և ներկայացնելու վերջինիս շահերը ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովում: Որպես լիազորագրի տրման ամսաթիվ նշված է՝ 12.01.2016թ.: ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով 2017 թվականի հունվարի 19-ին մուտքագրվել է Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզետոլլուի դիմումը, որով վերջինս հայտնել է, որ լիազորագրի տրման ամսաթիվը սխալմամբ նշել է 12.01.2016թ. և խնդրել է որպես լիազորագրի տրման ամսաթիվ դիտել 12.01.2017թ. և բողոքի քննության ընթացքում ճանաչել Անուշ Կիրակոսյանի լիազորությունները:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Հանձնաժողովը գտնում է, որ սույն բողոքի հիմքում դրված են երկու հիմնական փաստարկներ՝

ա) ստուգումը կատարելու պահին ՀԴՄ-ն չի գործարկվել.

բ) Բողոք բերած անձի աշխատակցի կողմից վաճառք չի իրականացվել:

Անդրադառնալով Բողոք բերած անձի կողմից նշված առաջին փաստարկին Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման պահին ՀԴՄ-ի խափանված լինելու կամ այլ պատճառաբանությամբ գործարկման ոչ ենթակա լինելու հանգամանքը որևէ կերպ չի բացառում Ա/Ձ-ին առաջադրված խախտման հիմքերը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն, հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է՝ բ) հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ գործունեության այլ տեսակների մասով:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են սույն օրենքը, հսկիչ-

դրամարկղային մեքենաների կիրառմանը վերաբերող Հայաստանի Հանրապետության այլ օրենքները, օրենքով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, ինչպես նաև իրավական այլ ակտեր: Նշված օրենքի 5-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն, հսկիչ-դրամարկղային մեքենաներին, ցանցային կապի միջոցներին ներկայացվող պահանջները, գրանցման կարգը և շահագործման կանոնները, ինչպես նաև դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 30-րդ կետի համաձայն, մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է: Ընդ որում, նույն կարգի 41-րդ կետը սպառիչ կերպով սահմանում է այն դեպքերը, որոնք օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով չեն համարվում ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում: Սույն գործի փաստական հանգամանքներում վերոհիշյալ դեպքերը առկա չեն:

Հարկ է նշել, որ Ա՝ Տեսչությունը, Ա՝ Գանգատարկման հանձնաժողովը որևէ կերպ չեն հերքել կամ վիճարկել Բողոք բերած անձի կողմից ներկայացված վերոհիշյալ փաստարկը, քանի որ ինչպես արդեն նշվեց, Ա/Ձ-ն իրավունք չունի իրականացնել գործարք՝ ՀԴՄ-ի կիրառման անհնարինության դեպքում, որպիսի հանգամանքին պատշաճ անդրադարձել է նաև Գանգատարկման հանձնաժողովը:

Անդրադառնալով Բողոք բերած անձի ներկայացրած երկրորդ փաստարկին, այն է՝ Ա/Ձ-ի աշխատակցի կողմից փաստացի վաճառք չի իրականացվել, Հանձնաժողովը գտնում է, որ այն ևս անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Հանձնաժողովին տրամադրված նյութերում առկա է «Հայտարարություն 1» վերտառությամբ փաստաթուղթ, համաձայն որի՝ Նելլի Դանիելյանը հայտարարություն է արել այն մասին, որ Ա/Ձ Մելքոն Էմիրզեօղլուի մոտ աշխատել է 06.09.2016թ.-ից և որպես աշխատանք կատարել է ապրանքների դասավորություն և վաճառք:

Մեկ այլ փաստաթղթի՝ հարկային տեսուչների կողմից 08.09.2016թ. կազմված թիվ 1 արձանագրության համաձայն, ավագ հարկային տեսուչ Անդրանիկ Դավթյանը 08.09.2016թ.-ին ժամը 19:10-ից 19:25-ն ընկած ժամանակահատվածում ք. Երևան, Եր. Քոչար 17/2 հասցեում գտնվող խանութից կատարեց 1 հատ տղամարդու կիսասպորտային վերնաշապիկի գնում՝ 3000 դրամ ընդհանուր արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառող-գանձապահ Նելլի Դանիելյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց՝ ՀԴՄ-ի խափանված լինելու պատճառով: Ստուգում անցկացնող հարկային ծառայողի կողմից ներկայացվեց ծառայողական վկայականը և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Նշված արձանագրությունը ստորագրվել է տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչ Նելլի Դանիելյանի կողմից, ով վերոհիշյալ արձանագրության վերաբերյալ որևէ առարկություն չի ներկայացրել:

Նշված փաստաթղթերից հետևում է, որ Ա/Ձ-ին պատկանող խանութում ստուգման պահին կատարվել է ապրանքի վաճառք, որպիսի փաստը արձանագրվել է տնտեսավարող սուբյեկտի աշխատակցի մասնակցությամբ:

Անդրադառնալով Բողոք բերած անձի կողմից ներկայացված փաստարկներին և նրա աշխատակից Նելլի Դանիելյանի «10.01.2017թ.» թվագրմամբ բացատրությանը՝ վաճառքը փաստացի կատարված չլինելու վերաբերյալ, Հանձնաժողովը գտնում է, որ դրանք անհիմն են և Գանգատարկման հանձնաժողովն ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի ձեռնարկել է միջոցներ՝ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու և գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:

Մասնավորապես, Գանգատարկման հանձնաժողովի որոշման համաձայն, հաշվի առնելով Ա/Ձ-ին պատկանող խանութի տարածքի տեսանկարահանման փաստը, Բողոք բերած անձին առաջարկվել է ներկայացնել ստուգման օրվա տեսագրությունը՝ ի հիմնավորումն իր կողմից ներկայացված փաստարկի, որը սակայն մերժվել է տեսագրությունը պահպանված չլինելու պատճառաբանությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Հաշվի առնելով այն փաստը, որ վարչական մարմնի տրամադրության տակ եղած փաստաթղթերով հիմնավորված է ՀԴՄ կիրառման կանոնների խախտմամբ վաճառքի իրականացումը, դրա բացակայությունը՝ որպես անձի համար բարենպաստ փաստական հանգամանք, պետք է ապացուցվի վերջինիս կողմից, որպիսի ապացույցներ սակայն քննարկվող վարույթում բացակայում են:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ բացակայում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքերը:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «բ» կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անհատ ձեռնարկատեր Մելքոն Էմիրզեօղլուի 13.01.2017թ.-ի բողոքը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության 10.10.2016թ. թիվ 2136028 ստուգման ակտի 2-րդ կետն անփոփոխ թողնելու մասով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 25.11.2016թ. թիվ 36/2 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ